միջնորդութեամբն մեր Այդու Բիջոյին։
Այլ եւս ահա զերկուս ջորիս առաքեցաք, զմինն տացես Թովմաճանին, և զմիւսն որդւոյն Պօղոսին և փութով առաքեսցես մեզ. ողջ լեր։

Զայս լուեալ Ճգմաթի Միքայէլին՝ փոքր ինչ տհաճեցաւ ընդ Այդու Բիջոյին, և կոչեալ զնա առ ինքն և ասէ. Ո՞չ ապաքէն ի քէն է այս հնարք գիտեմ, բայց վասն հաճելոյ զկամս Թագաւորին թողում։ Եւ ետ զերկուս ջորիսն զառաքեալսն ի Թագաւորէն Թովմաճանին. այլ եւս ետ պաշարս բազումս վասն ճանապարհին. և ելին ի Աստուայէ Ապրիլի 24ին։

Եւ յետ երից աւուրց գնացեալ իջեւանեցան ի գիւղաքաղաքն Սարայի[1], որ յոյժ աւերեալ և քայքայեալ էր։ Քանզի ի սկզբան շինեալ է քաղաքս այս յանուանի Տիկնոջէն Սարայէ, որ և կանգնեալ է ի նմա մեծամեծ արձանք տասն տեղիս տեղիս. յոյժ բարձր և գեղեցիկ դրոշմեալ և քանդակեալ, և գոն մինչեւ ցայժմ, բայց ոմանք ի նոյն արձանիցն անկեալք և խորտակեալք էին։

Այլ եւս էր շինեալ տիկինն Սարայ ըզպալատ մի վասն իւրոյ բնակութեան միապաղաղ քարեայ մեծ լերին միոյ, որ կոփելով և տաշելով կազմեալ է ի նմա զբազում սենեակս և զսրահս երիւք յարկօք, և գեղեցիկ սանդխովք, զդրունս և զլուսամուտս, զրակս և զախոռս, և զմաղազաս և զմառանս, զներքնատունս և զվերնատունս և զսեղանատունս, զպաղաջուն քէօշկս և զդստիկոնս, առանց ինչ բռելոյ, այլ բոլոր ի միակտուր քարէ էր կոփածեալ թէ՛ առաստաղն և թէ՛ յատակն. և էր յոյժ զարմանալի շէնք։ Սակայն այժմ վասն անբնակ գոլոյն և գուցէ ի պատերազմի՝ մի կողմն այս պալատիս և ի տեղիս տեղիս աւերեալ քայքայեալ է։ Բայց այսու ամենայնիւ քան զկէսն աւելի անվնաս կայր, որ Թովմաճանն անձամբ տեսեալ և շրջագայեալ է ի միապաղաղ քարեայ պալատն այն։

Այլ եւս էր անդ մեծ և հին եկեղեցի մի հայկէշի, յորում գոյ ասէին տասնաբանեայ պատուիրանաց մին կտոր քարն Մովսէսի, և տարեալ զԹովմաճան և զԱյդու Բիջոն յեկեղեցին և ցոյց ետուն զփակեալ խորան մի, յորում էր քարն տասնաբանեայ և ոչ կամէին բանալ։ Բայց պնդելովն Այդու Բիջոյին և եւս թէ ազգական էր Թագաւորի, հազիւ կամեցան բանալ։ Եւ բացին և հանին զպատատ ինչ հանդերձի և սկսան օրհնութեամբ բանալ, որ էր պատատ ի մէջ պատատի այսինքն պոհճայի, մինչեւ թերեւս հարիւր պատատս բացին, և հուսկ յետոյ պատատեալ ի մէջ մուշամպայի հանին զկտոր մի քարի, յորոյ վերայ կային դրոշմեալ անկատար գիրս և ծունր եղեալ համբուրեցին և խաչակնքեալ եդին ի տեղի իւր, և վերստին պատատեալ եդին ի խորանի և փակեցին։

Եւ իրաւի մեծ ուխտ լինէր, եթէ այն կտոր քարն ի քարէ տասնաբանեայ պատուիրանին իցէ, զոր ետ Աստուած Մովսէսի։

Եւ ի միւսում աւուրն ելին ի քաղաքէ տիկնոջն Սարային և Մայիսի 6ին հասին ի Թագաւորանիստ քաղաքն ԿԵՕՆՏԷՐ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս թէ զիա՞րդ ներկայացաւ Թովմաճան առաջի Իբեկ թագուհւոյն և թագաւոր բռուն նորին, և թէ եւ նոցա զընծայս իւր մեծագին. և յաղագս գանձապետ լինելոյն և ապա եղանելոյն ի պաշտօնէն և բողոքելն զորդին իւր զՊօղոսն անդէն և դառնալն ի Ճիտակ, և եւս քանի ինչ ի վերայ արարողութեանց հայկէյից։

Այլ արդ ի հասանել Թովմաճանին ի Կեօնտէր, տարան զնա ի պալատն արքունի, և ետուն նմա անդէն չորս հինգ սենեկօք տուն մի, նաեւ պատուաւոր անձ մի իբր պահապան նորին, զի թէ պակասութիւն ինչ ունիցի նա՝ հոգասցէ զամենայն։ Այլ եւս եկն հրաման յիթեկէ

1. Axum = Աքսումն է, սուրբ քաղաքը։